

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԸԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒԲԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Ա. Է. Հարությունյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Լուսինն Թովչյանից
(ղիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան, Լենինգրադյան փ. 48/4 շ., 50 բն. հեռ. 093-89-93-81
e-mail: topchyanlusine@gmail.com

(բնակության վայր, հեռախոսի համար, էլ փոստի հասցե)

ԴԻՍՈՒՍ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ:
2. Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝ հասարակական խորհրդում ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ:
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ 
<25> Տուրբուխ 20/28.

15738-18
25 05 18

Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած
գործունեության վերաբերյալ

2015 – 2016 թթ. մագիստրոսի կրթական ծրագրով սովորել եմ Ռեվիոա ի Վիրջիլի համալսարանում, որը համարվում է պետական ճանաչված բարձրագույն ուսումնական հաստատություն Իսպանիայի Թագավորությունում: 2016 թ. ինձ շնորհվել է մագիստրոսի որակավորում՝ <<Անզլերեն լեզվի ուսուցում և դասավանդում որպես օտար լեզու>> մասնագիտությամբ:

2016 թ. մասնագիտական պրակտիկայի ընթացքում 5 ամսով դասավանդել եմ անզլերեն լեզու Ժոան XXIII միջնակարգ դպրոցում, որը գտնվում է Իսպանիայի Թագավորության Կատալոնիա համայնքում: Դասավանդման հետ համատեղ իրականացրել եմ նաև կրթական ծրագիր 13-14 տարեկան աշակերտների համար, որը պետք է ներկայացնեն Տառագոնա քաղաքում տեղի ունեցող Միջերկրածովյան խաղերին:

2016 թ. մայիսի 19-20 մասնակցել եմ Տառագոնա քաղաքում տեղի ունեցող միջազգային կոնֆերանսին ուղղված <<Բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցմանը>> (CLIL), որտեղ ներկայացրել եմ իմ ծրագիրը, թե ինչպես կարելի է համատեղել օտար լեզվի ուսուցումը հիմնական դպրոցական առարկաների դասավանդման հետ:

2016 թ. հոկտեմբերից սկսել եմ աշխատել Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնում, որը հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առաջատար միջազգային հասարակական կազմակերպություններց մեկը: Աշխատել եմ «2017թ. խորհրդարանական

ընտրությունների էլեկտրոնային մոնիտորինգ» ծրագրում որպես թարգմանիչ-օպերատոր:

2017թ-ի սեպտեմբերից առ այսօր աշխատում եմ Մովսես Խորենացու անվան համալսարանում որպես դասախոս: Իսկ 2018 թ. հունվարից դասավանդում եմ անգլերեն որպես լրացուցիչ շաբաթօրյա արտադասարանական առարկա, <<Հայ Ասպետ>> մասնավոր դպրոցում :

2018 թ. ապրիլին ստացել եմ հրավեր մասնակցելու Լեհաստանի Պոզնան քաղաքում գտնվող Ադամ Միցկևիչ համալսարանում տեղի ունեցող ամառային սեմինարին, որն ուղղված է նորությունների ճշգրտությանը, այսինքն՝ ճիշտ նորությունները կեղծերից տարբերակելու մեխանիզմների ուսումնասիրությանը:

Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝ հանրային խորհրդում ներգրավման աշխատանքներին մասնակցության վերաբերյալ

ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհուրդը մեր կրթական ոլորտում առկա այն եզակի հարթակներից է, որտեղ հնարավորություն էմ տեսնում ներկայացնել իմ առաջարկություններն ուղղված ոլորտի զարգացմանը, ինչպես նաև օգնել և աջակցել առկա այն ծրագրերի և գաղափարների իրականացմանը, որոնք կնպաստեն մեր երկրում կրթության արդյունավետ կազմակերպմանը և իրացմանը: Չնայած համեմատաբար երիտասարդ տարիքիս ունեմ դասավանդման բավական մեծ աշխատանքային փորձ հետևաբար նաև քաջատեղյակ եմ ոլորտի առջև ծառայած խնդիրներից շատերին: Պետք է նշեմ, որ ուսուցչական աշխատանքով զբաղվել եմ ոչ միայն Հայաստանում, այլ նաև Իսպանիայում, որտեղ էլ նաև ստացել եմ մագիստրոսական կրթությունը: Կարծում եմ, որ կուտակված գիտելիքները կարող եմ ծառայեցնել մեր կրթական ոլորտին: Այժմ էլ դասավանդելով բուհում և մասնավոր դպրոցում՝ ամենօրյա ռեժիմով հետևում եմ համակարգում իրականացվող փոփոխություններին և զարգացումներին:

Կցանկանայի առանձնացնել, ըստ իս, մի քանի կարևոր խնդիրներ, որոնք առկա են մեր կրթական ոլորտում և որոնց լուծման գործում կարող եմ ներդրում ունենալ նաև ես: Դրանցից է՝ Հայաստանում գործող ուսումնական հաստատություններից մեծամասնությունում դեռևս Խորհրդային ժամանակներից ժառանգած դասավանդման, դասապրոցեսների, մեթոդների կիրառումը, որը շատ դեպքերում չի համապատասխանում ժամանակակից աշխարհի պահանջներին և որի արդյունքում էլ, թե միջնակարգ կրթություն

ստացած և թե քարձրագույն կրթություն ստացած երիտասարդները չեն կարողանում իրենց արժանի տեղը գտնել ոչ միայն Հայաստանի, այլ ինչու ոչ նաև արտերկրյա աշխատաշուկայում: Չեմ կարող չառանձնացնել նաև այն փաստը, որ այսօր հանրակրթական դպրոցներից մեծամասնություններում ուսուցիչները կաշկանդված են կիրառելու ավելի ժամանակակից մեթոդներ դասապրոցեսը կազմակերպելու ընթացքում, քանի որ կան հստակ ուղեցույցներ, թե ինչպես պետք է աշխատի մասնագետը: Մեկ այլ խնդիր է ուսուցիչների վերապատրաստման հարցը հանրապետության մասշտաբով:

Կան նաև բազմաթիվ համակարգային խնդիրներ և չնայած օրենքների առկայությանը, որոնք կոչված են կարգավորելու ոլորտը, միևնույնն է, շատ դեպքերում հետևողականության բացակայության պատճառով, այդ օրենքները այդպես էլ չեն կիրառվում: Հատկապես կցանկանամ առանձնացնել ուսուցիչների ընտրության հարցը: Չկա պետական այնպիսի մի կառույց, որը սահմանելով որոշակի չափանիշներ՝ իրականացնի այս կարևորագույն գործառույթը: Դա թողնված է մեկ անձի՝ տնօրենի, հայեցողությանը իր բոլոր հետևանքներով:

Ինձ համար կարևորագույն խնդիրներից է նաև դպրոց – համալսարան և համալսարան - աշխատաշուկա կապի բացակայությունը, ուստի հուսով եմ, որ հնարավորություն կստանամ ընդգրկվելու ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում, որտեղ էլ կկարողանամ արդյունավետ գործունեություն իրականացնել:

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Այս 3 տարիների ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարությունն առաջադրել և իրականացրել է կրթական ծրագրեր, որոնք որոշակիորեն նպաստել են ոլորտի առաջխաղացմանը, բայց բազմաթիվ դեպքերում այդպես էլ չեն լուծել ոլորտում առկա առաջնային խնդիրները:

Առավել կարևոր ձեռքբերումներից կցանկանայի առանձնացնել այն աշխատանքները, որոնք տարվել են Եվրոպական միության <<Հորիզոն-2020>> ծրագրին մասնակցության ուղղությամբ, որի արդյունքում կնքվել է «ՀՀ կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրին մասնակցության վերաբերյալ» համաձայնագիրը: Այս ծրագիրը մեծ հնարավորություններ է ընձեռում հայ գիտնականներին՝ ընդգրկվել համատեղ գիտական ծրագրերում և օգտվել ԵՄ գիտական դրամաշնորհներից:

Առանձնանում է նաև Կրթության գերազանցության ազգային ծրագիրը (ԿԳԱՕ), որը նախաձեռնվել է <<Այբ>> կրթական հիմնադրամի կողմից: Այս ծրագրի հիմնական նպատակն էր Հայաստանում ստեղծել հայալեզու, բայց միևնույն ժամանակ միջազգայնորեն մրցունակ դպրոցական կրթական ծրագիր՝ Արարատյան բակալավրիատը:

2016 թ. դեկտեմբերին ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց թույլատրել <<Արարատյան բակալավրիատ>> նոր կրթական ծրագրի ներդրումը ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում և ճանաչել ԱԲ-ի քննությունների արդյունքները ՀՀ բուհեր ընդունելության համար: Եթե ընդունելության

քննությունները կազմակերպում և անցկացնում է «Փնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ապա Արարատյան բակալավրիատի քննությունները կազմակերպում և անցկացնում է «Արարատյան բակալավրիատ» ծրագրի ներդրման և իրականացման համար պատասխանատու կազմակերպությունը՝ «Այբ» կրթական հիմնադրամը, գնահատման և թեստավորման կենտրոնի հետ համատեղ:

2017 թվականին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը»:

Այս ծրագրերով նախատեսվում է նաև իրականացնել հանրակրթական հաստատություններում աշխատող ուսուցիչների մասնագիտական որակավորման ապահովման խնդրի լուծում, քանի որ կան ուսուցիչներ, որոնց կրթությունը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին:

Ուստի ընդունվեց « ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» օրենք, որի համաձայն՝ ուսումնական հաստատությունում աշխատող այն ուսուցիչները, որոնք չեն համապատասխանում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով (*ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ*) սահմանված պահանջներին, կարող են շարունակել իրենց մասնագիտական գործունեությունը մինչև 2023 թվականի օգոստոսի 20-ը, եթե մինչև այդ չեն ապահովում ուսուցչին ներկայացվող պահանջները:

Այսպիսով այս օրենքի ամրագրումից հետո այն ուսուցիչները, որոնք չեն համապատասխանել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին

մասով սահմանված պահանջներին, հնարավորություն են ունեցել հեռակա ուսուցմամբ ստանալ բարձրագույն կրթություն:

Ուսումնասիրելով 2010-2011-ից, 2016-2017 ուսումնական տարիների տվյալները, պարզ է դառնում, որ մեծ թվով ուսուցիչներ օգտվել են ընձեռված հնարավորությունից, ուստի ենթադրվում է, որ նշված ժամկետը երկարաձգելու պարագայում՝ վերջիններիս թիվը կավելանա:

Գաղափար էր առաջարկվել ՀՀ դպրոցներում էլեկտրոնային կրթության անցնելու մասին, որը իրականացնելու համար անհրաժեշտ է տեխնիկական ապահովվածություն, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստում: Այդ նպատակով տարբեր աշխատանքներն են տարվել, ինչպես օրինակ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) հեռավար ուսուցման հարթակում 2017 թ. հոկտեմբերի 18-ին մեկնարկված «Schoolsite.am տիրույթում դպրոցական կայքերի ստեղծում» հերթական դասընթացը: Դասընթացին մասնակցելու համար դիմել էին ՀՀ տարբեր մարզերի դպրոցների ավելի քան 300 մասնագետներ, որոնցից ընտրվել են շուրջ 100 սկսնակ ներկայացուցիչներ, ովքեր ունեն մասնագիտական աջակցության կարիք: Այսպիսով, ընդհանուր առմամբ, 1000-ից ավել ուսուցիչներ վերապատրաստվել են էլեկտրոնային կրթություն ապահովելու համար:

2016 թ. ստեղծվել է Կրթության ազգային ինստիտուտի կրթական ակադեմիան YouTube-ում՝ <https://www.youtube.com/user/ruzaniko>, որտեղ տեղադրված են 46 կրթական բովանդակությամբ տեսադասեր: Մշակվել է նաև «Սոցիալական ցանցերը որպես հեռավար ուսուցման գործիք» ծրագիրը, որի նպատակն է աջակցել մանկավարժների սոցիալական մեդիայի և թվային գործիքների կիրառման զարգացմանը, ինչպես նաև ուսումնական և կառավարման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Այս ծրագրով հեռավար եղանակով վերապատրաստում է անցնել ՀՀ մարզերի գյուղական դպրոցների 32 ուսուցիչ:

Հատկանշական է նաև դպրոցներում այն ծրագրի առաջադրումը, որն ուղղված է Ֆինանսական և ձեռնարկատիրական կրթությանը: Նախատեսվում է, որ այս ծրագիրը

կներդրվի Հայաստանի հանրակրթական դպրոցներում: Արդեն 2017 թվականի սեպտեմբերից ՀՀ հանրակրթական 13 դպրոցում ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ես և շրջակա աշխարհը» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցում՝ ֆինանսական կրթության տարրերի ներառմամբ:

Հավելեմ, որ վերոնշյալ բոլոր ծրագրերի գաղափարները կարող են լինել արդյունավետ և նպաստել կրթական ոլորտի զարգացմանը միմիայն ծրագրերի պատասխանատու, հետևողական կիրառման դեպքում: Ծրագրերից որոշներն ունեն նաև շտկումների և որոշակի փոփոխությունների կարիք ավելի մեծ արդյունք գրանցելու համար: